ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«17» սեպտեմբերի 2014թ.

ՀՐԱՄԱՆ
№ 245

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշման 14-րդ կետի 15-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հիմնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետևյալ գերատեսչական պարգևները՝

1) ***«Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար»*** ոսկե մեդալ.

2) ***«Տրդատ Ճարտարապետ»*** ոսկե մեդալ՝ իրականացված լավագույն ճարտարապետական կառույցի (բնակելի, հասարակական, արտադրական, բազմաֆունկցիոնալ, ինչպես նաև հոգևոր նշանակության շենք/շինություն, ճարտարապետական համալիր, ճարտարապետական փոքր ձևեր, ինտերիեր) համար.

3) ***«Մոմիկ Ճարտարապետ»*** ոսկե մեդալ՝ ճարտարապետության պատմությանն ու տեսությանը, հայկական ճարտարապետական հուշարձանների վերակագնման հարցերին, հայ նշանավոր ճարտարապետների կյանքին ու գործունեությանը նվիրված լավագույն գիտահետազոտական աշխատանքի տպագիր հրատարակության համար:

2. Հաստատել՝

1) «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ոսկե մեդալի ու վկայականի ուրվագծերը՝ համաձայն N1 հավելվածի և ոսկե մեդալի նկարագիրը՝ համաձայն N1.1 հավելվածի.

2) «Տրդատ Ճարտարապետ» ոսկե մեդալի ու վկայականի ուրվագծերը՝ համաձայն N2 հավելվածի և ոսկե մեդալի նկարագիրը՝ համաձայն N2.1 հավելվածի.

3) «Մոմիկ Ճարտարապետ» ոսկե մեդալի ու վկայականի ուրվագծերը՝ համաձայն N3 հավելվածի և ոսկե մեդալի նկարագիրը՝ համաձայն N3.1 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության բնագավառի նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալի վկայականի ուրվագծերը և ոսկե մեդալի նկարագիրը հաստատելու մասին» N94 հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նախարար՝

Նարեկ Սարգսյան

Իսկականի հետ ճիշտ է

«17» 09 2014թ.

Հավելված N 1

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի մայիսի 17-ի

N 245 հրամանի

ՆԿԱՐԱԳԻՐ
«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ

«Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ոսկե մեդալն ունի շրջանաձև տեսք (31 մմ տրամագծային և 2,5 մմ կողային չափերով), որն օղակով միացված է Հայաստանի Հանրապետության դրոշի էմալապատ պատկերով ուղղանկյունաձև կախիչին:

Մեդալի դիմերեսին ճարտարապետական խոյակ է, երկրորդ պլանում՝ շինարարական կռունկ և շենքերի ուրվագծեր: Մեդալի ներքին մասում շրջանագծին զուգահեռ կորությամբ, հայերեն մեծատառերով գրված է՝ «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»: Մեդալի շրջերեսին՝ կենտրոնում, հայերեն մեծատառերով գրված է՝ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ»:

Մեդալը պատրաստված է 925 հարգի արծաթից և ոսկեջրված 999 հարգի ոսկով:

Հավելված N 1.1

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի մայիսի 17-ի

N 245 հրամանի

ՈՒՐՎԱԳԻԾ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ



Հավելված N 2

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի սեպտեմբերի 17-ի

N 245 հրամանի

ՆԿԱՐԱԳԻՐ

«ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ

«Տրդատ Ճարտարապետ» ոսկե մեդալն իրենից ներկայացնում է չորս կողմից ոլորված մագաղաթի տեսքով խաչաձև մակերես՝ 40x40 մմ կողմերի և 3 մմ կողային չափերով: Այն օղակով միացված է Հայաստանի Հանրապետության դրոշի էմալապատ պատկերով սեղանաձև կախիչին: Կախիչի չափերն են՝ վերևի մասում 20 մմ, ներքևի մասում 10 մմ, երկարությունը՝ 25 մմ:

Մեդալի դիմերեսին՝ կենտրոնում պատկերված է Տրդատ Ճարտարապետի կողմից կառուցված Անիի Մայր Տաճարը, վերևի մասում հայերեն մեծատառերով գրված է «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ներքևի մասում՝ հայերեն մեծատառերով «ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ»:

Մեդալի շրջերեսին՝ վերևի մասում, անգլերեն մեծատառերով գրված է «REPUBLIC OF ARMENIA», ներքևի մասում՝ անգլերեն մեծատառերով «THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT» և փորագրված է մեդալի եռանիշ համարը:

Մեդալը պատրաստված է 925 հարգի արծաթից և ոսկեջրված 999 հարգի ոսկով:

Հավելված N 2.1

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի սեպտեմբերի 17-ի

N 245 հրամանի

ՈՒՐՎԱԳԻԾ

«ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ



Հավելված N 3

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի նոյեմբերի 27-ի

N 245 հրամանի

ՆԿԱՐԱԳԻՐ

«ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ

«Մոմիկ Ճարտարապետ» ոսկե մեդալն իրենից ներկայացնում է չորս կողմից ոլորված մագաղաթի տեսքով խաչաձև մակերես՝ 40x40 մմ կողմերի և 3 մմ կողային չափերով: Այն օղակով միացված է Հայաստանի Հանրապետության դրոշի էմալապատ պատկերով սեղանաձև կախիչին: Կախիչի չափերն են՝ վերևի մասում 20 մմ, ներքևի մասում 10 մմ, երկարությունը՝ 25 մմ:

Մեդալի դիմերեսին՝ կենտրոնում պատկերված է Նորավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու դրվագը, վերևի մասում հայերեն մեծատառերով գրված է «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ներքևի մասում հայերեն մեծատառերով՝ «ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ»:

Մեդալի շրջերեսին՝ վերևի մասում, անգլերեն մեծատառերով գրված է «REPUBLIC OF ARMENIA», ներքևի մասում՝ անգլերեն մեծատառերով «THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT» և փորագրված է մեդալի եռանիշ համարը:

Մեդալը պատրաստված է 925 հարգի արծաթից և ոսկեջրված 999 հարգի ոսկով:

Հավելված N 3.1

ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի սեպտեմբերի 17-ի

N 245 հրամանի

ՈՒՐՎԱԳԻԾ

«ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ